# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2014թվականի հունվարի 31-ի թիվ 2 որոշմամբ հրապարակվում է

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

## ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ <<ՔՆՔԾԻԳ- ԲԸԱՇՁԲ-14/2>>

Պատվիրատուն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում, ստորև ներկայացնում է <<ՔՆՔԾԻԳ- ԲԸԱՇՁԲ-14/2>> ծածկագրով հայտարարված բաց ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

| | |
|---|---|
| Հարցադրում 1: | Հրավերի ՄԱՍ II, 3.3 կետում՝ <<Պայմանագրերը գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով իրականացվելու դեպքում, անհրաժեշտ է հայտով ներկայացնել սույն հրավերի 1-ին մասի 7.4.1 և 7.4.2 կետերով սահմանված փաստաթղթերը>> կա հղում 7.4.1 և 7.4.2 կետերին, որոնք բացակայում են Հրավերում: |
| Հարցադրման ստացման ամսաթիվ: | 31 հունվարի 2014թ.: |
| Պարզաբանում: | <<ՔՆՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/2>> ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում պայմանագրերը գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով իրականացվելու դեպքում, անհրաժեշտ է հայտով ներկայացնել սույն հրավերի 1-ին մասի 7.3.1 կետով սահմանված փաստաթղթերը, իսկ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝ ղեկավարվել սույն հրավերի 1-ին մասի 7.3.2 կետով: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անուշ Վարդանյանին:

Հեռախոս՝ 010 564 316:

Էլ. փոստ՝ urbanpiu@gmail.com

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ